ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-1225[1]-23.12.2025-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 20-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 71-74-րդ կետերով.

«71. Ապրանքի ծագման հավաստագրի տրամադրման համար	տարեկան բազային տուրքի 5-ապատիկի չափով
72. Հայաստանի Հանրապետությունում արտադրված՝ մինչև 2,5 տոննա ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 07 (բանջարեղեն և որոշ ուտելի արմատապտուղներ և պալարապտուղներ), 08 (ուտելի մրգեր և ընկույզներ, ցիտրուսային մշակաբույսերի և սեխի կեղևներ և կճեպներ) և 10 (հատիկաբույսեր) խմբերին դասվող գյուղատնտեսական մթերքների համար տրամադրված հավաստագրերի համար	տարեկան բազային տուրքի չափով
73. Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինի կողմից ապրանքի ծագման հավաստագրի կրկնօրինակի տրամադրման համար	տարեկան բազային տուրքի չափով

74. Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինի կողմից ապրանքի ծագման հավաստագրի փոխարինման համար	տարեկան բազային տուրքի չափով»:

Հոդված 2. Օրենքի 20.1-ին հոդվածի 1-ին մասի աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ 23-րդ և 24-րդ կետերով"

«23) Ապրանքի ծագման երկրի որոշման փորձաքննության գործունեություն	տարեկան բազային տուրքի 20-ապատիկի չափով»:
«24) Ապրանքի ծագման երկրի որոշման որակավորման քննության մասնակցություն	տարեկան բազային տուրքի 5-ապատիկի չափով»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ից:

Կ-1225[1]-23.12.2025-ՏՀ-011/1~~0~~

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ~~ՆԱԽԱԳԻԾ~~

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 20-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 71-74-րդ կետերով.

«71. Ապրանքի ծագման ~~երկրի~~ հավաստագրի տրամադրման համար	տարեկան բազային տուրքի 5-ապատիկի չափով
72. Հայաստանի Հանրապետությունում արտադրված՝ մինչև 2,5 տոննա ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 07 (բանջարեղեն և որոշ ուտելի արմատապտուղներ և պալարապտուղներ), 08 (ուտելի մրգեր և ընկույզներ, ցիտրուսային մշակաբույսերի և սեխի կեղևներ և կճեպներ) և 10 (հատիկաբույսեր) խմբերին դասվող գյուղատնտեսական մթերքների համար տրամադրված հավաստագրերի համար	տարեկան բազային տուրքի չափով

73. Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինի կողմից ապրանքի ծագման ~~երկրի~~ հավաստագրի կրկնօրինակի տրամադրման համար	տարեկան բազային տուրքի չափով
74. Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինի կողմից ապրանքի ծագման ~~երկրի~~ հավաստագրի փոխարինման համար	տարեկան բազային տուրքի չափով»:

Հոդված 2. Օրենքի 20.1-ին հոդվածի 1-ին մասի աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ 23-րդ և 24-րդ կետերով"

«23) Ապրանքի ծագման երկրի որոշման փորձաքննության գործունեություն	տարեկան բազային տուրքի 20-ապատիկի չափով»:
«24) Ապրանքի ծագման երկրի որոշման որակավորման քննության մասնակցություն	տարեկան բազային տուրքի 5-ապատիկի չափով»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԱՌԵՎՏՐԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ և ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ Կ-1225-23.12.2025-ՏՀ-011/1)

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ					
1"	ՀՀ կառավարություն	Օրենքի նախագծի վերնագիր	Հաշվի առնելով, որ Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ կետը շարադրվում է նոր խմբագրությամբ, միևնույն ժամանակ հոդվածը լրացվում է նոր 3 1-ին մասով, հետևաբար Նախագծում կատարվում է փոփոխություն և լրացում, ուստի առաջարկում ենք Նախագծի վերնագրում լրացնել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ» բառերը:	Ընդունվել է Կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է
2.	ՀՀ կառավարություն	Օրենքի նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի և ««Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի կարգավորումներն		

			համապատասխանեցնել միմյանց՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումը, որի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտը չպետք է հակասի հավասար կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին: Մասնավորապես, հաշվի առնելով այն, որ «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով պետական տուրք է սահմանվել նաև ապրանքի ծագման հավաստագրի, դրա կրկնօրինակի տրամադրման կամ փոխարինման համար, ինչպես նաև հիմք ընդունելով «Նոմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի րդ հոդվածի 3-րդ մասը առաջարկվում է ««Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի չհամարակալված պարբերությունը շարադրել որպես Օրենքի 14-րդ հոդվածի 3.1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ.	Ընդունվել է Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է

			Ապրանքի ծագման հավաստագրի, դրա կրկնօրինակի տրամադրման կամ փոխարինման նպատակով գանձվում է պետական տուրք՝ օրենքով սահմանված չափով:»		
3.	ՀՀ կառավարություն	Օրենքի նախագծի 1-ին հոդված	Հաշվի առնելով «Նոմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթները, ինչպես նաև այն հանգամանքը, որ նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում է, որ ապրանքի ծագման հավաստագրերի տրամադրման և փորձաքննության անցկացման, փորձաքննության մարմիններին ներկայացվող պահանջները և փորձագետների որակավորման ու քննության անցկացման կարգը սահմանում է Կառավարությունը, ուստի առաջարկում ենք նախատեսել նաև անցումային դրույթ՝ սահմանելով Նախագծի 1-ին մասով նշվող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման ժամկետը: Ըստ այդմ առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածը շարադրել նոր հետևյալ խմբագրությամբ՝ «Հոդված 2. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ	Ընդունվել է Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է

			1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարկմանը հաջորդրող օրվանից: 2. Սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով սահմանվածված կարգավորումը տարածվում է 2027 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա: 3. Սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին կետով նախատեսված Կառավարության որոշումն ընդունվում է սույն օրենքն ուժ մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:»		
Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ					
4"	ՀՀ կառավարություն	Օրենքի օրենքի նախագիծ	Հաշվի առնելով, որ Նախագծով կատարվում են 1-ից ավելի լրացումներ, առաջրկում ենք նախագծի վերնագիրը խմբագրել է «ԼՐԱՑՈՒՄ» բառը փոխարինվել է «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառով:	Ընդունվել է Կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է

5	ՀՀ կառավարություն	**Օրենքի նախագիծ 1-ին հոդված**	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Մաքսային կարգավորման մասին» օրենքի հոդվածներով «հավաստագիր» բառից առաջ չի օգտագործվում «երկրի» բառը, ուստի առաջարկում ենք **նախագծի** 1-ին հոդվածի 71-րդ կետի՝ «Ապրանքի	Ընդունվել է	Ընդունվել է

			ծագման երկրի հավաստագրի տրամադրման համար», **73-րդ կետի՝** «Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի կողմից ապրանքի ծագման երկրի հավաստագրի կրկնօրինակի տրամադրման համար» **և 74-րդ կետի՝** «Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինի կողմից ապրանքի երկրի ծագման հավաստագրի փոխարինման համար» նախադասություններից հանել «երկրի» բառը:	**Կատարվել է համապատասխան փոփոխություն**	
6	ՀՀ կառավարություն	**«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Առևտրաարդյունաբերական պալատների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Գործունեության**	# «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Առևտրաարդյունաբերական պալատների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի վերաբերյալ առաջարկություններ չկան:		

		իրականացման ծանուցման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքներ			